հանար:

Հայկական վիրտուալ գիտական գրադարան

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի է ունեցել «*Հայկական վիրտուալ գիտական գրադարան*» ծրագրի շնորհանդեսը, որն իրականություն է դարձել ՀՀ կրթության եւ գիտության նախարար **Արմեն Աշոտյանի** աջակցությամբ: Բացելով միջոցառումը՝ ՀՀ ԳԱԱ նախագահ **Ռաֆիկ Մարտիրոսյանը** կարեւորել է Հայկական վիրտուալ գիտական գրադարանի ստեղծման նշանակությունը եւ նշել, որ այն «*մեկ պատուհանի*» սկզբունքով հնարավորություն կտա հայ գիտնականներին առցանց օգտվել համաշխարհային գիտական ամսագրերից ու շտեմարաններից:

ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի նախագահ **Սամվել Հարությունյանը**, ԿԳ նախարար Արմեն Աշոտյանի անունից ողջունելով մասնակիցներին, նշել է, որ համաշխարհային գիտական գրականության հասանելիությունն այսօր հայ գիտնականների թիվ մեկ խնդիրն է: Վիրտուալ գրադարանի ստեղծումը հնարավորություն կտա հայ գիտնականներին ոչ միայն ծանոթանալու համաշխարհային գիտական մտքին, այլեւ իրենց աշխատությունները ներկայացնել համաշխարհային հանրությանը: Ս. Հարությունյանն ընդգծել է, որ կատարվում են աշխատանքներ, եւ մինչեւ 2015թ. համաշխարհային գիտական գրականության 70-80%-ը հայ գիտնականներին հասանելի կդառնան:

Շնորհանդեսի ընթացքում ողջույնի խոսքով հանդես է եկել նաեւ ՀՀ-ում ԱՄՆ արտակարգ եւ լիազոր դեսպան **Ջոն Հեֆերնը:** Կարեւորելով գիտությունը եւ տեխնոլոգիական ոլոտները՝ ԱՄՆ դեսպանն իր խոսքում նշել է, որ այս ուղղությամբ նախատեսվում է զարգացնել համագործակցությունը ՀՀ ԳԱԱ-ի հետ:

«*Հայկական վիրտուալ գիտական գրադարան*» ծրագիրը ներառում է բաց մատչելիության սկզբունքով հրատարակված ավելի քան 3 միլիոն գիտական հոդված եւ ՄԱԿ-ի Research4Life ծրագրի ավելի քան 8 հազար ամսագիր: Ծրագրի իրականացմանն աջակցում են ԱՄՆ Քաղաքացիական հետազոտությունների եւ մշակումների հիմնադրամը, ՀՀ Կրթության եւ գիտության նախարարությունը, ՀՀ Գիտության պետական կոմիտեն, ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանը եւ ԱՄՆ պետդեպարտամենտը: